ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 843

«16» հուլիսի 2021թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի զոհված զինծառայողների ընտանիքի երեխաներին Հանքավանի ճամբար տեղափոխելու նպատակով ավտոբուսի ծառայության համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2021թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 120.0 հազ. դրամ փոխանցել «Էջմիածնի բեռնաուղևորատար ավտոտրանսպորտային» ԲԲԸ-ի համապատասխան հաշվեհամարին՝ ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 856

20 մայիսի 2021թ. գ. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 6 <<ԱՐԵՎԻԿ>>,ԹԻՎ 10 <<ՇՈՒՇԱՆ>>, ԹԻՎ 11 <<ՀԱՍՄԻԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 42-րդ կետերի պահանջներով, Էջմիածին քաղաքի ավագանու 22.03.2019թ. թիվ 38 որոշմամբ ընդունված կարգով, հիմք ընդունելով 2020թ. դեկտեմբերի 18-ի թիվ 12 նիստի թիվ 130 որոշումը <<Էջմիածնի համայնքապետարանի ենթակայությամբ գործող ՀՈԱԿ-մանկապարտեզներում երեխաների խնամքի համար գանձվող 2021թ. վարձավճարների>>, <<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում 2021թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին, ինչպես նաև հաշվի առնելով Էջմիածնի համայնքապետարանի ընդհանուր, սոցիալական և առողջապահության բաժնի ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Էջմիածնի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզներ հաճախող երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 5 /հինգ/ երեխաների ցանկը՝ համաձայն Կրթության և մշակույթի բաժնի պետի կողմից 16.07.2021թ. զեկուցագրին կից ներկայացված ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 254

21 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով էջմիածին քաղաքի, Եկմալյան փողոցի թիվ 28 տան բնակիչ Վարդան Գարեգինի Բաղդասարյանի դիմումը՝ իրեն և Ալբերտ Գարեգինի Բաղդասարյանին պատկանող բնակելի տունը բաժանելու մասին /հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 09072021-04-0057, տրված 09.07.2021թ./, «Կարեն Մաչանյան» ԱՁ /վկայական թիվ 0244/ կողմից 01.07.2021թ. կատարված չափագրությունը/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի, Եկմալյան փողոցի թիվ 28 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.0589 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Եկմալյան փողոց թիվ 28 բնակելի տուն, 0.0357 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Եկմալյան փողոց թիվ 28/1 բնակելի տուն, 0.0451 հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Եկմալյան փողոց թիվ 28/2 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 858

31 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի, Հայկաշեն գյուղի 16 փողոցի թիվ 2 տան բնակիչ՝ Մեսրոպ Հմայակի Սարոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Մեսրոպ Հմայակի Սարոյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 1980185, տրված 19.08.2005թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց թիվ 96/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 859

« 22 » հուլիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂ., ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Էջմիածնի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 21.07.2021 թվականին կազմված թիվ 15 արձանագրության՝ Արման Ալբերտի Ղազարյանի կողմից, Էջմիածին քաղաքի Սայաթ-Նովա փող., թիվ 5 հասցեում առանց համապատասխան թույլտվության, իրականացվել է ինքնակամ շինարարական աշխատանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կասեցնել Էջմիածին քաղաքի Սայաթ-Նովա փող., թիվ 5 հասցեում ինքնակամ շինարարությունը՝ արգելելով վերոնշյալ տարածքում Արման Ալբերտի Ղազարյանի կամ որևէ այլ անձի կողմից շինարարական գործողություններ կատարելը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 860

«22» հուլիսի 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹՎՈՎ 11 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարան են դիմել թվով 11 քաղաքացիներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով 22.03.2019 թ. ավագանու թիվ 4 նիստի թիվ 38 որոշման հավելվածի 5-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին համայնքի 2021թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Էջմիածին քաղաքի թվով 11 քաղաքացիների հատկացնել 520 000 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 861

23 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Արամ Լեռնիկի Պետրոսյանի լիազորված անձ՝ Արմեն Օնիկ-Հովհաննեսի Եղիազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արամ Լեռնիկի Պետրոսյանին պատկանող գույքին /հիմք՝ վկայական 1461845, տրված 19.04.2005թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց թիվ 43/58 խանութ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 868

28 հոկտեմբեր 2021թ. գ. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի 5ա շենքի թիվ 18 բնակարանի բնակիչ Հրաչիկ Մնացականի Սահակյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 08062021-04-0073 տրված 08.06.2021թ./, Էջմիածին քաղաքի 04-002-0229-0021 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2156 հա հողամասից 0.032հա մակերեսով մասը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Հիմք ընդունելով Էջմիածնի համայքի ավագանու 19. 07. 2021թ. թիվ 9 նիստի թիվ 87 որոշումը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1732-ն որոշմամբ հաստատված Էջմիածնի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի 04-002-0229-0021 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2156 հա հողամասից 0.032հա մակերեսով մասը համապատասխանեցնել Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծին՝ և համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:
2. Հողամասին տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին, Արագածի զանգված թիվ 17/110:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 863

26 դեկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի, Բաղրամյան փողոցի 10 տան բնակիչ՝ Գուրգեն Գարիկի Խաչատուրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Գուրգեն Գարիկի Խաչատուրյանին պատկանող հողամասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24052019-04-0001, տրված 24.05.2019թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Արագածի 2-րդ զանգված թիվ 7/7 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 364

26 հոկտեմբերի 2021թ. ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 01. 04. 2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի համայնքի սեփականություն հանդիսացող Գ.Նարեկացու փողոցի թիվ 44 հասցեին կից գտնվող 0. 003հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Գ.Նարեկացու փողոց թիվ 44/2:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 865

26 հոկտեմբերի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ Ա.Ավետիսյանի դիմումը ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ ՀՀ ՊՆ 13.07.2021թ. թիվ ՊՆ005/879 գրությունը և ՀՀ ՊՆ « Ռազմաքարտեզագրական» կենտրոնի կողմից 01.05.2021թ. կատարված չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի, Պատկանյան փողոցի թիվ 5 և թիվ 7 հասցեներում գտնվող գույքը համաձայն ներկայացված սխեմայի բաժանել երեք մասերի.
   Բաժանվող մաս թիվ 1-ին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պատկանյան փողոց թիվ 7 բնակելի շենք,
   Բաժանվող մաս թիվ 2-ին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պատկանյան փողոց թիվ 5 բնակելի շենք,
   Մնացորդային մասին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Պատկանյան փողոց թիվ 7/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 866

26 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՌՆԻԿ ԶԱՎԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԳՈՀԱՐԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ, ԳՈՌ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԼԻԼԻԹ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Անդրանիկի 2-րդ թաղամասի թիվ 41 տան բնակիչ Գառնիկ Զավենի Վարդանյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն <<Հայաստանի ազգային արխիվի>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 27.05.2021թ. թիվ Ամ-545 արխիվային քաղվածքի և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 24.03.2021թ. կատարված չափագրության, Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի թիվ 41 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները պատկանում են Գառնիկ Զավենի Վարդանյանին, Գոհարիկ Վաղարշակի Հունանյանին, Գոռ Գառնիկի Վարդանյանին և Լիլիթ Գառնիկի Վարդանյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.048հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0031հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Անդրանիկի թաղամասի թիվ 41 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասերում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0.0031հա մակերեսով հողամասը համարել Գառնիկ Զավենի Վարդանյանի /ծնված 09.12.1961թ./, Գոհարիկ Վաղարշակի Հունանյանի /ծնված 26.11.1962թ./, Գոռ Գառնիկի Վարդանյանի /ծնված 10.07.1986թ./ և Լիլիթ Գառնիկի Վարդանյանի /ծնված 24.05.1988թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 42:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 867

14 հոկտեմբերի 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՈՒՇԵՂ ՄԻՇԱՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Երևան քաղաքի Արցախի փողոցի թիվ 14 շենքի թիվ 138 բնակարանի բնակիչ Մուշեղ Միշայի Բարսեղյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Ալեք Պարգևի Ավետյանի կողմից 23.06.2018թ. հաստատված թիվ 4028 և 4029 գրանցամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 11. 05. 2021թ. կատարված չափագրության, Էջմիածին քաղաքի Զվարթնոց Թորամանյան փողոցի թիվ 3 /5/ հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները պատկանում են Մուշեղ Միշայի Բարսեղյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0,185 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0,0262 հա սահմանազատված հողամաս,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Զվարթնոց Թորամանյան փողոցի թիվ 3/5/ հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0. 0262հա մակերեսով հողամասը համարել Մուշեղ Միշայի Բարսեղյանի /ծնված 10. 04. 1958թ. / սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.Էջմիածին, Թորամանյան փողոց թիվ 5 :
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 868

26 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Այգեստան փողոցի թիվ 3 տան բնակիչ՝ Հակոբ Մարտունի Ենոքյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հակոբ Մարտունի Ենոքյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 22062021-04-0018, տրված 22.06.2021թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Այգեստան փողոց թիվ 3 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 869

29 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 63/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն, համայնքի ղեկավարի 23.06.2021թ. թիվ 683 որոշումների առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Կարեն Ժիրայրի Մարգարյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 63/2 հասցեում գտնվող 220.8քմ /220.8քմ արտաքին և 186.7քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0583հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Կարեն Ժիրայրի Մարգարյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 220.8քմ /220.8քմ արտաքին և 186.7քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տան համար 1 108 196 /մեկ միլիոն հարյուր ութ հազար հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ և 0.0583հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով՝ 1 683 413 /մեկ միլիոն վեց հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր տասներեք/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարեն Ժիրայրի Մարգարյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 63/2 հասցեում գտնվող 220.8քմ /220.8քմ արտաքին և 186.7քմ ներքին/ մակերեսով կիսակառույց բնակելի տունը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0583հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Կարեն Ժիրայրի Մարգարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 840

29 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն , 912-Ն որոշումների և 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման /24 կետ. 3) ենթակետ/ պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից կատարված 10.06.2021թ. չափագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի վրա գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, 0. 00952հա մակերեսով հասարակական կառուցապատման և 0,0018 հա մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության, ընդամենը 0,0107 հա մակերեսով հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 95. 2քմ /95. 2քմ արտաքին և 90.7քմ ներքին/ մակերեսով խանութը և պահեստը համարել Էջմիածին համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը՝ չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նրա զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. 0,0018 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
3. Օրինականացնել Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի վրա գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0. 0107հա մակերեսով հողամասի վրա, ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 95.2քմ /95.2քմ արտաքին և 90.7քմ ներքին/ մակերեսով խանութը և պահեստը:
4. Խանութին տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 31/5:
5. Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցի թիվ 31/5 հասցեում գտնվող ընդհանուր՝ 95.2քմ /95.2քմ արտաքին և 90.7քմ ներքին/ մակերեսով խանութը և պահեստը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0. 0107հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Ասատուր Հարությունի Խաչիկյանին:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 84

29 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Վազգեն Առաջինի փողոցի թիվ 12 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ՝ Հայկ Գրիշայի Աղաջանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հայկ Գրիշայի Աղաջանյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գարանցման վկայական թիվ 26052021-04-0083, տրված 26.05.2021թ. / տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Անդրանիկի 3 - րդ թաղամաս թիվ 97 կիսակառույց բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 372

29 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Հ.Ավետիսյան փողոցի թիվ 24 տան բնակիչ՝ Հրաչիկ Հարությունի Խաչատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Հրաչիկ Հարությունի Խաչատրյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 01.09.2008թ. հաստատված թիվ 5401 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 07.05.2021թ. հաստատված թիվ 2938 և 2939 սեղամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը / տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Հ.Ավետիսյան փողոց թիվ 24/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 873

29 հոկտեմբերի 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Ն.Ստեփանյան փողոցի թիվ 14 տան բնակիչ՝ Գոհար Գեորգիի Գինոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Գոհար Գեորգիի Գինոսյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 15062021-04-0099, տրված 15.06.2021թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ն.Ստեփանյան փողոց 1-ին փակուղի թիվ 1/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 874

29 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով <<ԼՈՒՊՈՒՍ>> ՍՊԸ տնօրեն՝ Սևակ Բիշարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, <<ԼՈՒՊՈՒՍ>> ՍՊԸ-ին պատկանող, 04-002-0300-0056 ծածկագրով հողամասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14062021-04-0043, տրված 14.06.2021թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 1/10 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 875

29 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի, Ֆրիտյոֆ Նանսենի /նախկին՝ Օստրովսկի/ փողոցի թիվ 5 տան բնակիչ՝ Գեղեցիկ Շիրինի Սլոյանի դիմումը և «Ավագ Ավագյան» ԱՁ /վկայական թիվ 0331/ կողմից 02.07.2021թ. կատարված չափագրությունը/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0861-0004 ծածկագրով հողամասին /հիմք՝ <<<Հայաստանի Ազգային Արխիվ>> ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 23.06.2021թ. տրված թիվ Ամ-649 արխիվային քաղվածքը/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ֆրիտյոֆ Նանսենի փողոց թիվ 6 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 876

29 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի, Դավթաշեն 4-րդ թաղամասի թիվ 45/5 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ՝ Սամվել Գևորգի Մաչանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Սամվել Գևորգի Մաչանյանին պատկանող, 04-002-0384-0004 ծածկագրով հողամասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03062021-04-0087, տրված 03.06.2021թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Էջմիածին-Մարգարա խճուղի թիվ 6/6 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 877

29 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով էջմիածին քաղաքի, Վազգեն Առաջինի փողոցի թիվ 12 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ՝ Հայկ Գրիշայի Աղաջանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0644-0016 ծածկագրով հողամասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 09122020-04-0049, տրված 09.12.2020թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենցի 1-ին թաղամաս թիվ 154 պարիսպ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 878

30 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ-ԵՐԵՎԱՆ ՄԱՅՐՈՒՂԻ 4/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԱԼԵՔՍԱՆ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 45/21 վարչական գործը՝ էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում Ալեքսան Ռուբենի Սարգսյանի կողմից առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու մասին, **պարզեց, որ**

Ալեքսան Ռուբենի Սարգսյանը (հասցե՝ ք. Էջմիածին, Իսակով փող., 71/1, անձ.՝ _____ ն), Լուսինե Արմենակի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում, էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), ինչի կապակցությամբ, էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից 08.06.2021 թվականին կազմված թիվ 13/1 արձանագրության, տեղազննության ակտերի, տարածքի լուսանկարների հիման վրա 2021 թվականի հուլիսի 01-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում, որի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված լինելով Ալեքսան Ռուբենի Սարգսյանը չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

• Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում առանց համապատասխան թույլտվության Ալեքսան Ռուբենի Սարգսյանի կողմից կատարված ինքնակամ շինության կապակցությամբ 08.06.2021 թվականին կազմված թիվ 13/1 արձանագրությունը, տեղազննության ակտը:

• Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

• Էջմիածին համայնքի ղեկավարի 06.07.2021 թվականի «Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում ինքնակամ շինարարությունը կասեցնելու մասին» թիվ 726 որոշումը:

• Լ. Սարգսյանի հայտարարությունը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասում գազալցակայան կառուցելու համաձայնության մասին:

• Հանձնաժողովի 16.07.2021թ. թիվ 45/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ հաստատված է համարվում հետևյալը.

Էջմիածին քաղաքի Իսակով փող., 71/1 հասցեի բնակիչ Ալեքսան Ռուբենի Սարգսյանի կողմից Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում գտնվող, Լուսինե Արմենակի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքում իրականացվել է ինքնակամ շինարարական աշխատանքներ /գազի լցակետի տեղադրում/, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Վերը նշված իրավախախտումը կասեցնելու նպատակով Էջմիածին համայնքի ղեկավարը ընդունել է 06.07.2021 թվականի «Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում ինքնակամ շինարարությունը կասեցնելու

մասին» թիվ 726 որոշումը, որի մեկական օրինակ Ալեքսան Ռուբենի Սարգսյանին և Լուսինե Արմենակի Սարգսյանին ուղարկվել է փոստային առաքումով:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի հուլիսի 01-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 հուլիսի 16-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել են Ալեքսան Ռուբենի Սարգսյանը /հիմք՝ փոստային ծանուցագիր AG031731376AM/ և Լուսինե Արմենակի Սարգսյանը /հիմք՝ փոստային ծանուցագիր AG031731190AM/, ինչպես նաև ծանուցումը հրապարակվել է azdarar.am պաշտոնական կայքում:

Ալեքսան Ռուբենի Սարգսյանը և Լուսինե Արմենակի Սարգսյանը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցված լինելով վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չեն ներկայացել վարչական վարույթի լսմանը, չեն ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Այսպիսով գտնում եմ, որ ապացուցված կարելի է համարել այն փաստը, որ հողօգտագործող Ալեքսան Ռուբենի Սարգսյանի կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավախախտում և վերջինս սույն դեպքում հանդիսանում է իրավախախտման սուբյեկտ: Լուսինե Արմենակի Սարգսյանը նշել է, որ չի առարկում իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում Ալեքսան Ռուբենի Սարգսյանի կողմից կատարվեն գազալցակայանի կառուցման աշխատանքներ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ **<u>իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:</u>**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 6-րդ և 23-րդ հոդվածները սահմանում են քաղաքաշինության գործունեության սուբյեկտների շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, շինարարության թույլտվության հասկացությունը, այն տվող անձանց շրջանակները:

Սույն գործով պարզ է դառնում, որ քաղաքաշինության գործունեության սուբյեկտը՝ Ալեքսան Ռուբենի Սարգսյանն է, քանի որ սեփականատերը գրավոր համաձայնություն է տվել Ալեքսան Սարգսյանին գազալցակայան կառուցելու համար: Վերջինս կրում է ֆիզիկական անձի այն հատկանիշները, որը կարող է հանդես գալ որպես քաղաքաշինական գործունեության մասնակից, այսինքն անշարժ գույքը փոփոխելու իրավունքով օժտված

օգտագործող (կառուցապատող, շինարարություն իրականացնող), որը պարտավոր էր կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Տվյալ պարագայում Ալեքսան Ռուբենի Սարգսյանը հողօգտագործման իրավունքով իրեն տրամադրված Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեով գտնվող տարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ իրականացրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

Ուստի վարչական վարույթով ապացուցված է համարվում այն փաստը, որ Ալեքսան Ռուբենի Սարգսյանը, որպես **կառուցապատող** Էջմիածին համայնքի վարչական սահմաններում գտնվող սեփականության իրավունքով այլ անձին պատկանող Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում գտնվող տարածքում, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ու համապատասխան հողօգտագործման իրավունքի, իրականացրել է ապօրինի շինության կառուցման շինարարական աշխատանքներ և հանդիսանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով սահմանված իրավախախտման սուբյեկտ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ալեքսան Ռուբենի Սարգսյանի նկատմամբ նշանակել տուգանք **200 000 /երկու հարյուր հազար/** ՀՀ դրամ գումարի չափով՝ Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 4/4 հասցեում ինքնակամ շինություն կառուցելու համար:

2.Նախազգուշացնել Ալեքսան Ռուբենի Սարգսյանին, որ եթե համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակելուց հետո շարունակվեն շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով՝ 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

3.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 879

30 հուլիսի 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՍ ԼԵՎՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 44/21 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Արարատյան փողոց 18ա տուն հասցեում Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանի կողմից հանրային սննդի կազմակերպման և իրացում իրականացնելու մասին, **պարզեց որ**

Անհատ ձեռնարկատեր Սոս Լևոնի Մարտիրոսյանը (ՀՎՀՀ 49523494՝ պետ.գրանցման համար՝ 38.02967/2001-04-17, հասցե՝ ք.Էջմիածին Արարատյան փող., թիվ 18Ա տուն), Էջմիածին քաղաքի Արարատյան փողոց 18ա տուն հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169^{16}-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված պահանջները, իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 19.06.2021թ. թիվ ՀՎ-2 արձանագրության և 01.07.2021թ-ի զեկուցագրի հիման վրա 2021 թվականիհուլիսի 1-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169^{16}-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը՝ այսուհետ հանձնաժողով, հրավիրել և անցկացրել է լսում Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանի բացակայությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 19.06.2021թ. թիվ ՀՎ-2 արձանագրությունը և 01.07.2021թ -ի զեկուցագիրը:
- Հանձնաժողովի 16.07.2021թ. թիվ 44/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանը Էջմիածին քաղաքի Արարատյան փողոց 18ա տուն հասցեում առանց թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի հուլիսի 1-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հուլիսի 16-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով ծանուցում է ուղարկվել Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանին և փոստային առաքանու ետադարձը չի վերադարձել:

Հիմք ընդունելով վերոգրյալը նոր նշանակված վարչական վարույթի լսման ծանուցումը 07.07.2021թ-ին հրապարակվել է azdarar.am կայքում:

Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանը, չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն **չի ներկայացել** վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային սննդի ծառայությունը՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:

Այսինքն՝ Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանը Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի 18ա տուն հասցեում առանց թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասով, 23-րդ, 32-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 17-րդ հոդվածներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար 70 000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Նախազգուշացնել Ա/Ձ Սոս Լևոնի Մարտիրոսյանին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում կնշանակվի տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 880

30 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԿԱՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ՋԻ ԲԻ ԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 42/21 վարչական գործը՝ Էջմիածին-Երևան խճուղու աջակողմյան մասում «ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ի կողմից առանց համապատասխան թույլտվության սեղմված բնական գազի կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«ՋԻ ԲԻ ԱՐ» սահմանափակ պատասխանատվության ընկերության (հաշվառված՝ Երևանյան խճուղի 26, ծանուցման հասցե ք.Էջմիածին, Մանուշյան 32, ՀՎՀՀ 04434159) կողմից ք. Էջմիածին, Մանուշյան փող., թիվ 32 հասցեում /Էջմիածին-Երևան խճուղու աջակողմյան մասում/, կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների խախտում՝ առանց թույլտվության սեղմված բնական գազի կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի իրականացում, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 29.06.2021թ. կազմված թիվ ՆՊ-3 արձանագրության և 01.07.2021թ. զեկուցագրի հիման վրա 2021 թվականի հուլիսի 01-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը՝ այսուհետ հանձնաժողով, հրավիրել և անցկացրել է լսումներ, որի ժամանակի և վայրի մասին «ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 29.06.2021թ. կազմված թիվ ՆՊ-3 արձանագրությունը և 01.07.2021թ. զեկուցագիրը:
- Azdarar.am կայքում հրապարակված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցում:
- Հանձնաժողովի 16.07.2021թ. թիվ 42/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ն ք. Էջմիածին, Մանուշյան փող., թիվ 32 հասցեում /Էջմիածին-Երևան խճուղու աջակողմյան մասում/ առանց թույլտվության իրականացրել է սեղմված բնական գազի կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի հուլիսի 01-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հուլիսի 16-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով ծանուցում է ուղարկվել «ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ին, որը վերադարձել է փոստային բաժանմունքից <<անհայտ>> նշումով:

Նշանակված վարչական վարույթի լսման ծանուցումը 07.07.2021թ-ին հրապարակվել է նաև ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

«ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ն, չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն **չի ներկայացել** վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ մասը տալիս է հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետի հասկացությունը, մասնավորապես՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայանները, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Այսինքն՝ «ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ն ք. Էջմիածին, Մանուշյան փող., թիվ 32 հասցեում /Էջմիածին-Երևան խճուղու աջակողմյան մասում/ առանց թույլտվության իրականացրել է սեղմված բնական գազի կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 4-րդ մասով, 23-րդ, 32-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 17-րդ հոդվածներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ՋԻ ԲԻ ԱՐ» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց թույլտվության սեղմված բնական գազի կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք իրականացնելու համար 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջը իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ հայմարզպետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 881

30 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՏԻԳՐԱՆ ՀՐԱՉԻԿԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 43/21 վարչական գործը՝ Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 48 հասցեում Ա/Ձ Տիգրան Հրաչիկի Աբգարյանի կողմից հանրային սննդի կազմակերպման և իրացում իրականացնելու մասին, **պարզեց որ**

Տիգրան Աբգարյան Հրաչիկի անհատ ձեռնարկատերը (ՀՎՀՀ 52205283՝ պետ.գրանցման համար՝ 99.854175/2015-04-17, հասցե՝ ք.Էջմիածին Մ. Մեխակյան 90), Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 48 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված պահանջները, իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 01.07.2021թ. թիվ ԹՄ-1 արձանագրության և 01.07.2021թ-ի զեկուցագրի հիման վրա 2021 թվականի հուլիսի 1-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը՝ այսուհետ հանձնաժողով, հրավիրել և անցկացրել է լսում Տիգրան Հրաչիկի Աբգարյան Ա/Ձ-ի բացակայությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 01.07.2021թ. թիվ ԹՄ-1 արձանագրությունը և 01.07.2021թ. -ի զեկուցագիրը:
- Հանձնաժողովի 16.07.2021թ. թիվ 43/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ա/Ձ Տիգրան Հրաչիկի Աբգարյանը Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 48 հասցեում առանց թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի հուլիսի 1-ին Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հուլիսի 16-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով ծանուցում է ուղարկվել Տիգրան Հրաչիկի Աբգարյան Ա/Ձ-ին և փոստային առաքանու ետադարձը չի վերադարձել:

Նշանակված վարչական վարույթի լսման ծանուցումը 07.07.2021թ-ին հրապարակվել է նաև ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

Ա/Հ Տիգրան Հրաչիկի Աբգարյանը, չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ ի:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային սննդի ծառայությունը՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:

Այսինքն՝ Ա/Հ Տիգրան Հրաչիկի Աբգարյանը Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց 48 հասցեում առանց թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասով, 23-րդ, 32-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 17-րդ հոդվածներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ա/Հ Տիգրան Հրաչիկի Աբգարյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար 70 000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

2. Նախազգուշացնել Տիգրան Հրաչիկի Աբգարյան Ա/Հ-ին, որ եթե նա, սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված արարքը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում կնշանակվի տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 882

30 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով էջմիածին քաղաքի, Ղ.Ղուկասյան փողոցի թիվ 7ա տան բնակիչ՝ Գայանե Մինասի Նահապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքում գտնվող, Գայանե Մինասի Նահապետյանին և Ռուբեն Մկրտչի Ամիրխանյանին պատկանող անշարժ գույքին /հիմք՝ վկայական 2492838, տրված 30.01.2008թ./ տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Ղ.Ղուկասյան փողոց թիվ 7/1 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 883

30 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Լեոնիդ Ազգալդյան /նախկին Վ.Կոստանյան/ փողոցի թիվ 1 շենքի թիվ 34 բնակարանի բնակիչ՝ Կոնստանտին Աշոտի Բուդաղյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0903-0248 և 04-002-0903-0446 ծածկագրերով անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N04072013-04-0027 տրված 04.07.2013թ. և N30062020-04-0060 տրված 30.06.2020թ./ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Լեոնիդ Ազգալդյան փողոց թիվ 2/1, 4/62-4/65 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 884

30 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով էջմիածին քաղաքի, Արարատյան փողոցի թիվ 34ա շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ՝ Գեղամ Ալբերտի Թադևոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքում գտնվող, Գեղամ Ալբերտի Թադևոսյանին պատկանող գույքին /հիմք՝ վկայական 2229296, տրված 04.08.2006թ./ տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Արարատյան փողոց թիվ 34ա շենք թիվ 23 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 885

30 հոկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 19ա տան բնակիչ՝ Արայիկ Հայկազի Բաղրամյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0051-0201 և 04-002-0051-0215 ծածկագրերով անշարժ գույքերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 16032021-04-0022, տրված 16.03.2021թ. և N 23072021-04-0092, տրված 23.07.2021թ./ միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 27/68, 31/4 խանութ :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 886

30 հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Էջմիածին քաղաքի, Ալավերդյան փողոցի 1-ին փակուղու թիվ 5 տան բնակիչ՝ Արթուր Ռոբերտի Հակոբյանի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արթուր Ռոբերտի Հակոբյանին պատկանող հողամասին /հիմք՝ վկայական 1138894, տրված 16.06.2004թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս 3-րդ փողոց թիվ 30 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 887

«30» հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 19.07.2021 թվականի թիվ 9 նիստի թիվ 83 որոշումը, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ Էջմիածին-Մարգարա խճուղի 5/3 հասցեում գտնվող 0,01 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 04-002-1084-0048/ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, արդյունաբերական օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Էջմիածնի համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ Էջմիածին-Մարգարա խճուղի 5/3 հասցեում գտնվող 0,01 հա մակերեսով հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 100% չափով:
3. Էջմիածնի համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ Էջմիածին-Մարգարա խճուղի 5/3 հասցեում գտնվող 0,01 հա մակերեսով հողամասի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:
4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 888

«30» հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 19.07.2021 թվականի թիվ 9 նիստի թիվ 84 որոշումը, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ Ե.Չարենցի 1-ին թաղամաս 817/1 հասցեում գտնվող 0,0217 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 04-002-0021-0018/ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի գործառնական նշանակության հողամասը, բնակելի տուն կառուցելու նպատակով:
2. Էջմիածնի համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ Ե.Չարենցի 1-ին թաղամաս 817/1 հասցեում գտնվող 0,0217 հա մակերեսով հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 200% չափով:
3. Էջմիածնի համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, քաղաք Վաղարշապատ Ե.Չարենցի 1-ին թաղամաս 817/1 հասցեում գտնվող 0,0217 հա մակերեսով հողամասի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:
4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 889

«30» հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 27.04.2021 թվականի թիվ 5 արտահերթ նիստի թիվ 47 և 19.07.2021թվականի թիվ 9 նիստի թիվ 89 որոշումները, հաշվի առնելով համայնքի ավագանու 26.01.2021թ-ի թիվ 20 որոշումը, անկախ գնահատող «ԱՎՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հաշվետվությունը և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող GAZ 3102 մակնիշի (թողարկման տարեթիվը 2007թ, նույնականացման համար- X9631020071373045) փոխադրամիջոցը:
2. Փոխադրամիջոցի մեկնարկային գինը սահմանել համաձայն Էջմիածին համայնքի ավագանու կողմից սահմանված արժեքի՝ 1 100 000 /մեկ միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Աճուրդի նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50% չափով:
4. Աճուրդի աճուրդային քայլը սահմանել մեկնարկային գնի 5% չափով:
5. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 290

«30» հոկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 19.07.2021թվականի թիվ 9 նիստի թիվ 85 որոշումը, հաշվի առնելով անկախ գնահատող «Էմ Ընդ Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հաշվետվությունը և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Էջմիածին համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Զվարթնոց փող., թիվ 2 շենք, թիվ 8 բնակարան հասցեում գտնվող (հիմք՝ սեփականության վկայական՝ 27052021-04-0065, տրված 27.05.2021թ.-ին) անշարժ գույքը՝ բնակարանը:
2. Բնակարանի մեկնարկային գինը սահմանել համաձայն Էջմիածին համայնքի ավագանու կողմից սահմանված արժեքի՝ 9 500 000 /ինը միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Աճուրդի նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50% չափով:
4. Աճուրդային քայլը սահմանել մեկնարկային գնի 5% չափով:
5. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 391

02 դեկտեմբեր 2021թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 11 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Արարատ Տարիելի Գալստյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 23052020-04-0013 տրված 23.05.2020թ./ Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 10/83,10/84 հասցեում գտնվող արտադրամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0,0153հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 10/83,10/84 հասցեում գտնվող արտադրամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի թիվ 10/85 հասցեում գտնվող 0. 0153հա մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Արարատ Տարիելի Գալստյանին:
2. Արարատ Տարիելի Գալստյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 679595 /վեց հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ:
4. Արտադրամասը և ընդլայնման նպատակով հատկացված հողամասը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին Զվարթնոց թաղամաս թիվ 10/83-10/85:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 892

02 օգոստոս 2021թ. ք. Էջմիածին

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ռոբերտ Պանդուխտի Հովհաննիսյանի լիազորված անձ Էդիկ Պանդուխտի Հովհաննիսյանը դիմել է Էջմիածնի համայնքապետարան Ռոբերտ Պանդուխտի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 739969 տրված 29.08.2003թ./ Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 1բ հասցեում գտնվող առևտրի սրահին կից համայնքային սեփականություն հանդիսացող 0,00051հա մակերեսով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքով Ռոբերտ Պանդուխտի Հովհաննիսյանին օտարելու խնդրանքով: Նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հնարավոր չէ այն օտարել որպես առանձին գույքային միավոր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 1բ հասցեում գտնվող առևտրի սրահին կից համայնքային սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 5/60 հասցեում գտնվող 0. 00051հա մակերեսով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Ռոբերտ Պանդուխտի Հովհաննիսյանին:
2. Ռոբերտ Պանդուխտի Հովհաննիսյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 53620 /հիսուներեք հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ:
4. Առևտրի սրահը՝ և ընդլայնման նպատակով հատկացված հողամասը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին Վազգեն Առաջինի փողոց թիվ 5/60:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանն հաջորդող օրվանից:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 893

02 օգոստոս 2021թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԵՈՐԳԻ ԱՐԵՍՏԱԿԻ ԳԻՆՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի թիվ 14 տան բնակիչ Գեորգի Արեստակի Գինոսյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 26.10.1977թ.տրված գույքային թերթի և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 15. 01. 2021թ. կատարված չափագրության, Էջմիածին քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները պատկանում են Գեորգի Արեստակի Գինոսյանին.
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0,161 հա, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0,0092 հա սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված է բնակելի տուն և բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ն.Ստեփանյան փողոցի թիվ 14 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 0. 0092հա մակերեսով հողամասը համարել Գեորգի Արեստակի Գինոսյանի /ծնված 29. 07. 1952թ. / սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 894

02 օգոստոս 2021թ.

ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՅԱՆԵ ԲԵԳԼԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՀՌԻՓՍԻՄԵ ՄԵՍՐՈՊԻ ՇԱՄԻՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան թաղամասի թիվ 284 տան բնակիչ Գայանե Բեգլարի Գրիգորյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով իրեն և Հռիփսիմե Մեսրոպի Շամիրյանի պատկանող /հիմք Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 08.06.2021թ. վավերացված թիվ 3863, 3864, 3865 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 11. 06. 2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 284 հասցեում գտնվող 0. 0474հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 284 հասցեում գտնվող 0. 0474հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Գայանե Բեգլարի Գրիգորյանի/ծնված 02.05.1964թ./ և Հռիփսիմե Մեսրոպի Շամիրյանի /ծնված 17. 01. 1992թ. / սեփականությունը:
2. 41. 9քմ մակերեսով շինություները համարել ինքնակամ:
3. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 284:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 895

«02» սեպտեմբերի 2021թ.

ք. Էջմիածին

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631 – Ն որոշմամբ, հիմք ընդունելով ք. Էջմիածին, Նալբանդյան փողոցի 66 տան բնակիչ Կարինե Ստյոպայի Կարապետյանի թիվ 2161 դիմումը, Էջմիածին համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 23.07.2021թ. թիվ 21 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի 66 տան անչափահաս բնակիչ Հարություն Արտաշի Կարապետյանի /ծնված՝ 12.03.2015թ. /ծննդյան վկայական II-ԿԲ N 433828/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով Արմինե Ստյոպայի Կարապետյանին /ՌԴ քաղաքացի, անձնագիր՝ 18 06 951031/:
2. Հսկողություն սահմանել անչափահաս Հարություն Արտաշի Կարապետյանի /ծնված՝ 12.03.2015թ./ ծննդյան վկայական II-ԿԲ N 433828/ խնամակալ՝ Արմինե Ստյոպայի Կարապետյանի /ՌԴ քաղաքացի, անձնագիր՝ 18 06 951031/ գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 836

<< 03 >> օգոստոս 2021թ. ք.Էջմիածին

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 77/21 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, քաղաքացի Մնացական Անդրանիկի Ղարագոզյանը /հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Թումանյան փող. թիվ 4Ա տուն, անձնագիր AF0657683/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 27.04.2021թ. տեղեկանքների և 06.05.2021թ-ի զեկուցագրի հիման վրա, 2021 թվականի մայիսի 06-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Մնացական Անդրանիկի Ղարագոզյանը պատշաճ ծանուցվել է /հիմք 18.05.2021թ. թիվ 2022 ծանուցումը/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, Մնացական Անդրանիկի Ղարագոզյանը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո /փոստային առաքանի՝ AG032007827AM/, 01.06.2021թ-ի ներկայացրել է դիմում-պնդումը վարչական վարույթի շրջանակներում լսումներ անցկացնելու վերաբերյալ:

Էջմիածնի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է լսում, Մնացական Անդրանիկի Ղարագոզյանի մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Հարկային պարտավորությունների վերաբերյալ Էջմիածնի համայնքապերարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից 27.04.2021թ.-ին ներկայացված տեղեկանքները և 06.05.2021թ զեկուցագիրը:
- Ալբերտ Հակոբի Գրիգորյանի 01.06.2021թ-ի դիմում-պնդումը վարչական վարույթի շրջանակներում լսումներ անցկացնելու վերաբերյալ:
- Հանձնաժողովի 17.06.2021թ. 77/21 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:
- Հարկային պարտավորությունների վերաբերյալ Էջմիածնի համայնքապերարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 02.08.2021թ.-ի տեղեկանքները:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ արձանագրում ենք հետևյալը.

Համաձայն գույքահարկով հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից և ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքների՝ ք. Էջմիածին, Նավասարդյան փող., թիվ 6/1 տուն հասցեում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են Ալբերտ Հակոբի Գրիգորյանի սեփականությունը և «Գույքահարկի մասին» ու «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված

կարգով վերջինս կողմից չի կատարվել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտավորությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Մնացական Անդրանիկի Ղարագոզյանը խախտել է ՀՀ Գույքահարկի մասին օրենքի 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ հոդվածները և չի կատարել գույքահարկի գծով իր պարտավորությունները, որի հետևանքով 2017 թվականից մինչև 2020 թվականը առաջացել է՝

Էջմիածին-Մարգարա խճուղում գտնվող անշարժ գույքի գույքահարկի /շինություն/ գծով **143 143/հարյուր քառասուներեք հազար հարյուր քառասուներեք / ՀՀ դրամ** հարկային պարտավորություն, որից 97 663 /իննսունյոթ հազար վեց հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 45 480 /քառասունհինգ հազար չորս հարյուր ութսուն / ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Մնացական Անդրանիկի Ղարագոզյանը խախտել է նաև <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 14-րդ հոդվածները և չի կատարել հողի հարկի գծով իր պարտավորությունները, որի հետևանքով 2018 թվականից մինչև 2020 թվականը առաջացել է՝

Էջմիածին-Մարգարա խճուղում գտնվող հողատարածքի համար հողի հարկի գծով **112 795 /հարյուր տասներկու հազար յոթ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ** հարկային պարտավորություն, որից 77 142/յոթանասունյոթ հազար հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքի գումար և 35 653 /երեսունհինգ հազար վեց հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ 2008-2020թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

Ընդհանուր պարտավորությունները համայնքի հանդեպ կազմում են **255 938/երկու հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր երեսունութ /ՀՀ դրամ:**

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2021 թվականի մայիսի 6-ին Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հունիսի 17-ին հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է՝ Մնացական Անդրանիկի Ղարագոզյանը, վերջինիս փոխարեն նիստին ներկայացել է լիազորված անձ Սամվել Սուրենի Մհերյանը, որը խնդրել է տրամադրել ժամանակ մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը հարկային պարտավորությունները կատարելու համար:

2021 թվականի օգոստոսի 2-ին Էջմիածնի համայնքապերարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի կողմից ներկայացված տեղեկանքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Մնացական Անդրանիկի Ղարագոզյանի կողմից կատարվել գույքահարկ և հողի հարկ բոլոր պարտավորությունները:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ ենթակետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Մնացական Անդրանիկի Ղարագոզյանի վերաբերյալ 06.05.2021թ. հարուցված թիվ 77/21 վարչական գործով վարույթը կարճել:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 837

03 օգոստոսի 2021թ. ք.Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով էջմիածին քաղաքի, Ղ.Ղուկասյան փողոցի թիվ 13 տան բնակիչ՝ Ավետիս Սամվելի Մանուկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքում գտնվող, Ավետիս Սամվելի Մանուկյանին պատկանող, 04-002-0324-0018 ծածկագրով հողամասին /հիմք՝ վկայական 1464026, տրված 17.06.2005թ./ տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, էջմիածին - Մարգարա խճուղի թիվ 12/3 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԚԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 898

03 օգոստոս 2021թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի, Բարեկամության փողոցի թիվ 41 տան բնակիչ Գեղամ Մարտիկի Չափարյանի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Էջմիածնի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 10052019-04-0048 տրված 10.05.2019թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 15.06.2021թ. կատարված չափագրությունը/, Էջմիածին քաղաքի Տերյան փողոցի թիվ 954,954/1 հասցեում գտնվող 0. 056հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված 624.7քմ /արտաքին 624.7քմ, և ներքին 559.5քմ / մակերեսով խանութը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Տերյան փողոցի թիվ 954,954/1 հասցեում գտնվող 0. 056հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, ինքնակամ կառուցված 624.7քմ /արտաքին 624.7քմ, ներքին 559.5քմ/ մակերեսով խանութը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 624.7քմ /արտաքին 624.7քմ, ներքին 559.5քմ/ մակերեսով խանութի օրինականացման համար սահմանված 2090247 /երկու միլիոն ինսուն հազար երկու հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 899

03 օգոստոսի 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և քննարկելով Էջմիածին քաղաքի, Տեր-Գաբրիելյան փողոցի թիվ 29 տան բնակիչ՝ Հասմիկ Սամվելի Ներսեսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0816-0007 ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 30052012-04-0112, տրված 30.05.2012թ./ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Տեր-Գաբրիելյան փողոց թիվ 33 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 900

03 դեկտեմբեր 2021թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով էջմիածին քաղաքի, Թելմանի փողոցի թիվ 19ա տան բնակիչ Վազգեն Թորգոմի Տիգրանյանի լիազորված անձ՝ Սարգիս Թորգոմի Տիգրանյանի դիմումը իր վստահորդին պատկանող բնակելի տունը բաժանելու մասին /հիմք՝ վկայական 2355998, տրված 05.10.2007թ./, «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ /վկայական թիվ 0331/ կողմից 10.06.2021թ. կատարված չափագրությունը/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի, Թելմանի փողոցի թիվ 19ա հասցեում գտնվող գույքը համաձայն ներկայացված սխեմայի բաժանել երկու մասերի.
   Առանձնացվող հատված թիվ 1-ին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Թելմանի փողոց թիվ 19/1 բնակելի տուն,
   Առանձնացվող հատված թիվ 2-ին տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Թելմանի փողոց թիվ 19/3 բնակելի տուն :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ